ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ

ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վերահսկողության հիմքը՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2016 թվականի մարտի 29-ի թիվ 10/2 որոշումը:

Վերահսկողության նպատակը՝ ՀՀ սփյուռքի նախարարության կողմից պետական բյուջեի ծրագրերով հատկացված միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողության իրականացում:

Վերահսկողության օբյեկտները՝ ՀՀ սփյուռքի նախարարություն, «Հայրենիք սփյուռք կենտրոն» ՊՈԱԿ:

Վերահսկողության կատարման ժամկետը՝ 2016 թվականի մարտի 30-ից մինչև 2016 թվականի սեպտեմբերի 1-ը:

Վերահսկողությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2015 թվականի հունվարի 1-ից մինչև ստուգման իրականացման ժամկետի ավարտը:

Վերահսկողության մեթոդաբանությունը՝ Վերահսկողությունն իրականացվել է դիտարկման, ստուգման և վերլուծության ձևով: Վերահսկողության ընթացքում

կիրառվել են համապատասխանության, ֆինանսական և արդյունավետության (կատարողական) վերահսկողության տեսակները:

Վերահսկողության ընթացքում, կիրառելով տարբեր տվյալների համադրման մեթոդներ, կատարվել է փաստաթղթերի ուսումնասիրություն:

Վերլուծության փուլում ամփոփվել են օրենքներով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարումը և համապատասխանությունը, դիտարկման և ստուգման ընթացքում արձանագրված փաստերը:

<u>Վերահսկողության ծավալը՝</u> Վերահսկողությունն ընդգրկել է պետական բյուջեի միջոցների հաշվին համապատասխան ծրագրերով 2015 և 2016 թվականներին կատարված ծախսերի համապատասխանությունն օրենսդրության և իրավական ակտերի պահանջներին:

<u>Դիտարկման արդյունքները՝</u> Դիտարկման արդյունքում ստուգման համար էական են համարվել պետական բյուջեից և ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ սփյուռքի նախարարությանը հատկացված միջոցների հաշվին իրականացված ծրագրերը, տրամադրված դրամաշնորհները, ինչպես նաև դրանց շրջանակներում կատարված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումները:

<u>Ստուգման արդյունքները</u>

ՀՀ սփյուռքի նախարարությանը (այսուհետ՝ Նախարարություն) 2015 և 2016 թվականների պետական բյուջեներով հատկացվել է համապատասխանաբար՝ 1,035,188.8 հազ. դրամ և 1,165,833.6 հազ. դրամ:

2015 և 2016 թվականներին «Նախարարության աշխատակազմի պահպանում» ծրագրով Նախարարությանը պետական բյուջեից հատկացվել է համապատասխանաբար՝ 292,539.7 հազ. դրամ և 299,011.1 հազ. դրամ:

2015 թվականին հատկացված գումարից ՀՀ ֆինանսների նախարարության համաձայնությամբ Նախարարությունը պակասացրել է 3,400.0 հազ. դրամ, որը ավելացվել է «Նախարարի աշխատակազմի պահպանում» ծրագրին: «Նախարարության աշխատակազմի պահպանում» ծրագրով 2015 թվականին

ճշտված նախահաշիվը կազմել է 289,139.7 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 263,453.7 հազ. դրամ, կամ բյուջետային միջոցների տնտեսումը կազմել է 25,686.0 հազ. դրամ: Ծախսված գումարից 250,417.9 հազ. դրամը կամ 95.1 %-ը կազմել են աշխատանքի վարձատրության ծախսերը, մնացած գումարը ուղղվել է ապրանքների, ծառայությունների ձեռք բերմանը և գործուղման ծախսերին:

«Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով 2015 թվականի բյուջետային հայտով Նախարարությունը աշխատակազմի 78 հաստիքային միավորների համար նախատեսել է 233,179.0 հազ. դրամ աշխատավարձ: Պետական բյուջեից հատկացվել է 240,656.5 հազ. դրամ կամ 7,477.5 հազ. դրամով ավելի: 2015 թվականի ընթացքում դրամարկղային ծախսը կազմել է 228,143.5 հազ. դրամ: Պայմանավորված տարվա ընթացքում առկա թափուր հաստիքներով, ծախսված գումարից 204,371.7 հազ. դրամ կազմել է Նախարարության աշխատակազմի աշխատողների աշխատավարձը, 14,679.8 հազ. դրամ՝ պարգևատրումները, ևս 9,092.0 հազ. դրամ ուղղվել է պայմանագրային աշխատողների վարձատրությանը:

2015 և 2016 թվականներին «Նախարարի աշխատակազմի պահպանում» ծրագրով Նախարարությանը պետական բյուջեից հատկացվել է համապատասխանաբար՝ 93,696.8 հազ. դրամ և 93,764.2 հազ. դրամ: 2015 թվականին ՀՀ կառավարության և Նախարարության կողմից բյուջետային ծրագրերի միջև կատարվել են վերաբաշխումներ, և ծրագրի ճշտված նախահաշիվը կազմել է 93,096.8 հազ. դրամ: Տարվա արդյունքներով Նախարարության դրամարկղային ծախսը կազմել է 86,060.6 հազ. դրամ, և արդյունքում տնտեսումը կազմել է 7,036.2 հազ. դրամ:

2015 թվականին «Նախարարի աշխատակազմի պահպանում» ծրագրի՝ «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով 13 հաստիքային միավորների համար ֆինանսավորված 65,496.5 հազ. դրամից որպես

պարգևատրում նախարարի աշխատակազմի աշխատողներին տրամադրվել է 6,206.3 հազ. դրամ:

Համաձայն «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 10-րդ մասի՝ «Աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից պետական ծառայողը հատուկ առաջադրանքների և (կամ) որակյալ աշխատանքի կատարման համար պարգևատրվում է իր մինչև մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով՝ անմիջական ղեկավարի առաջարկությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված համապատասխան լիազորություններով օժտված պաշտոնատար անձի հայեցողությամբ տարեկան ոչ ավելի, քան 3 անգամ»: 2015 թվականին Նախարարության աշխատողների պարգևատրման չափը չի գերազանցել նրանց պաշտոնային դրույքաչափի եռապատիկը, սակայն առանձին դեպքերում պարգևատրումները տրամադրվել են միանվագ: Տարվա արդյունքներով «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով բյուջետային միջոցների տնտեսումը «Նախարարության աշխատակազմի պահպանում» ծրագրով կազմել է 12,513.0 հազ. դրամ, «Նախարարի աշխատակազմի պահպանում» ծրագրով՝ 3,064.3 հազ. դրամ:

2015 թվականին «Նախարարության աշխատակազմի պահպանում» ծրագրի «Այլ վարձատրություններ» հոդվածով Նախարարությանը պետական բյուջեից ֆինանսավորվել է 4,906.9 հազ. դրամ: Հատկացված գումարից որպես պարգևատրում 948.6 հազ. դրամ տրամադրվել է Նախարարության պայմանագրային աշխատողներին: Մնացած 3,958.3 հազ. դրամով պարգևատրվել են Նախարարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողները, որոնց պարգևատրումը «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն կարող էր կատարվել միայն «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով հատկացված աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցների հաշվին:

2016 թվականին Նախարարությունը բյուջետային հայտով «Այլ վարձատրություններ» հոդվածով ևս նախատեսել է 4,916.3 հազ. դրամ, սակայն պետական բյուջեով գումար չի հատկացվել:

«Սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական գրականության և օժանդակ նյութերի մշակում և տրամադրում» ծրագրով 2015 և 2016 թվականներին Նախարարությանը պետական բյուջեից յուրաքանչյուր տարի հատկացվել է 100,000.0 հազ. դրամ: 2015 թվականին Նախարարությունը ծրագրով հատկացված միջոցների հաշվին հայերենով, արևմտահայերենով, ռուսերենով և անգլերենով ուսումնական գրականություն գնելու համար հրատարակչությունների և հեղինակների հետ կնքել է 26 պայմանագրեր՝ 88,500.0 հազ. դրամ ընդհանուր արժեքով: Ծրագրի շրջանակներում գնված գրականության առաքման համար «ՀայՓոստ» ՓԲԸ հետ կնքվել է պայմանագիր՝ 5,000.0 հազ. դրամ արժեքով և բեռնափոխադրում իրականացնող կազմակերպության հետ պայմանագիր՝ 1,000.0 հազ. դրամով արժեքով: Բացի այդ, ՀՀ ֆինանսների նախարարության համաձայնությամբ ծրագրի շրջանակներում կատարվել է հոդվածային վերաբաշխում և հատկացված գումարից 4,000.0 հազ. դրամ ուղղվել է ծրագրում ընդգրկված երկու պայմանագրային աշխատողների վարձատրության ծախսերին: Բացի «Սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական գրականության և օժանդակ նյութերի մշակում և տրամադրում» ծրագրով ուսումնական գրականության առաքման համար նախատեսված 5,000.0 հազ. դրամից 2015 և 2016 թվականներին պետական բյուջեի «Ուսումնական և հանրամատչելի գրականության առաքում սփյուռքի համայնքներին» ծրագրով Նախարարությանը յուրաքանչյուր տարի հատկացվել է ևս 10,000.0 հազ. դրամ, որի չափով կնքվել է պայմանագիր «ՀայՓոստ» ՓԲԸ-ի հետ:

Ծրագրի շրջանակներում ձեռք բերված ուսումնական գրականությունը պահեստավորելու համար Նախարարությունը «Զանգակ-97» ՍՊԸ հետ (վարձատու) կնքել է տարածքի ենթավարձակալության 01.06.2015թ. թիվ ՀՀՍՆ-06

պայմանագիր, որով նախատեսվել է 5 ամսով Նախարարությանը հանձնել 106.4 քմ ոչ բնակելի տարածք՝ 1,500.0 հազ. դրամ վարձավճարով: Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 17-րդ և 20-րդ հոդվածների պահանջների խախտումով՝ վարձատուն ընտրվել է առանց մրցույթ անցկացնելու՝ բանակցային ընթացակարգով առանց հայտարարություն հրապարակելու գնման ձևով:

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրով Նախարարությանը պետական բյուջեից 2015 և 2016 թվականներին յուրաքանչյուր տարի հատկացվել է 14,400.0 հազ. դրամ: 2015 թվականին ծրագրի իրականացման շրջանակներում Նախարարությունը տարբեր գիտական կազմակերպությունների և բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ հիմնարար և կարևորագույն գիտական հետազոտություններ իրականացնելու նպատակով կնքել է պայմանագրեր՝ 12 հետազոտություն կատարելու համար, յուրաքանչյուրը՝ 1,200.0 հազ դրամ արժեքով: Կնքված պայմանագրերով պատվիրատուի կողմից սահմանվել են գիտական հետազոտությունների թեմաները և համառոտ բովանդակությունը: Սակայն, Նախարարության կողմից մշակված չէ ընթացակարգ՝ պատվիրվող հետազոտությունների գնահատման չափորոշիչները որոշելու համար, ու արդյունքում տարբեր բարդության և ծավալի հետազոտությունների համար պայմանագրերով վճարվել է միևնույն չափի գումար:

«Հայկական սփյուռք» տարեգրքի հրատարակում» ծրագրով 2015 և 2016 թվականներին Նախարարությանը յուրաքանչյուր տարի հատկացվել է 8,200.0 հազ. դրամ: Նախարարության կողմից անցկացված մրցույթին մասնակցել է երկու կազմակերպություն, հաղթող է ճանաչվել «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ կողմից ներկայացված գնային առաջարկը՝ 7,761.6 հազ. դրամ: «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ հետ կնքվել է 20.03.2015թ. թիվ ՀՀՍՆ-ՇՀԱՇՁԲ-11/3-03/03-15 պայմանագիր՝ 2100 հատ տարեգիրք հրատարակելու համար, մրցույթի արդյունքում բյուջետային միջոցների տնտեսումը կազմել է 438.4 հազ. դրամ: Ստուգմամբ պարզվել է, որ 2015

թվականին Նախարարությունը հրատարակված 2100 հատ «Հայկական սփյուռք 2014» տարեգրքերից բաշխել է 1025 հատ կամ 48.8 %-ը և ստուգման պահի դրությամբ պահեստում մնացորդը կազմել է 1075 հատ՝ 3,976.3 հազ. դրամ արժեքով: Նախորդ տարվա «Հայկական սփյուռք 2013» տարեգրքերի մնացորդը պահեստում կազմել է 630 հատ: Փաստորեն, յուրաքանչյուր տարի առաջանում է տարեգրքերի չբաշխված մեծ քանակի ու արժեքի մնացորդ, և անհրաժեշտ է կրճատել հրատարակվող տարեգրքի խմբաքանակը:

Արտերկրում գործող հայալեզու լրատվամիջոցներին և պանթեոնի պահպանմանը աջակցելու համար Նախարարությանը պետական բյուջեի երկու ծրագրերով յուրաքանչյուր տարի հատկացվում է 14,000.0 հազ. դրամ:

ՀՀ կառավարության 22.10.2015թ. թիվ 1244-Ն որոշմամբ պահուստային ֆոնդից Նախարարությանը հատկացվել է 24,656.0 հազ. դրամ՝ սիրիահայ ուսանողներին 2015 և 2016 թվականների ուսումնական տարվա կրթաթոշակներ հատկացնելու նպատակով: Նախարարությունը գումարն ամբողջությամբ նվիրաբերության պայմանագրով տրամադրել է «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» հասարակական կազմակերպությանը: 2015 թվականի տարեվերջին այդ ծրագրով դեբիտորական պարտքը կազմել է 12,630.0 հազ. դրամ: Ստուգմամբ պարզվել է, որ հասարակական կազմակերպությունը երկու փուլով՝ 2015 թվականի դեկտեմբերին և 2016 թվականի ապրիլին նվիրաբերված գումարները փոխանցել է ուսումնական հաստատություններ՝ 83 սիրիահայ ուսանողների ուսման վարձի համար: Բացի այդ պարզվել է, որ «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» հասարակական կազմակերպության հաշվին նվիրաբերված գումարից առաջացել է 3,131.0 հազ. դրամ մնացորդ, որը ստուգման ընթացքում հասարակական կազմակերպության կողմից 27.05.2016թ. թիվ 000886 բյուջետային փոխանցումով վերադարձվել է պետական բյուջե:

Նախարարության աշխատակազմում գործող ներքին աուդիտի բաժինը 2015 թվականի հաստատված ծրագրի համաձայն իրականացրել է Նախարարության

2014 և 2015 թվականների գնումների գործընթացի համակարգի գնահատման աուդիտ, որի արդյունքներով կազմել է հաշվետվություն:

«Հայրենիք – սփյուռք կենտրոն» ՊՈԱԿ

2015 և 2016 թվականներին պետական բյուջեի «Հայրենիք սփյուռք գործակցության ծրագրերի իրականացում», «Մշակութային միջոցառումների իրականացում», «Արի տուն» ծրագրի շրջանակներում սփյուռքի երիտասարդության ճանաչողական այցելություններ Հայաստան», «Հայաստան-սփյուռք գործակցության թեմայով հեռուստահաղորդումների և տեսահոլովակների պատրաստում և հեռարձակում», «Տեղեկատվական և ուսուցողական կայքերի մշակման և սպասարկման ծառայություններ» ու «Տարածքային համագործակցության և համահայկական մշակութային ծրագրերի իրականացում» ծրագրերով հատկացված համապատասխանաբար՝ 499,352.3 հազ. դրամը և 623,458.3 հազ. դրամը Նախարարությունը կնքված դրամաշնորհների տրամադրման պայմանագրերով հատկացրել է համակարգում գործող «Հայրենիք – սփյուռք կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ ՊՈԱԿ):

«Հայրենիք սփյուռք գործակցության ծրագրերի իրականացում» ծրագրով կատարվում են 18 հաստիքային աշխատողներով ՊՈԱԿ-ի տարեկան պահպանման ծախսերը, որը 2015 և 2016 թվականներին կազմել է համապատասխանաբար՝ 35,417.3 հազ. դրամ և 35,523.3 հազ. դրամ:

2015 և 2016 թվականներին «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով ՊՈԱԿ-ին հատկացվել է համապատասխանաբար՝ 261,298.6 հազ. դրամ և 385,298.6 հազ. դրամ: Նախորդ տարվա նկատմամբ 2016 թվականին դրամաշնորհի գումարի ավելացումը պայմանավորված է երկու տարին մեկ անցկացվող «Իմ Հայաստան» փառատոնի ծախսերով և «Սփյուռքի ամառային դպրոցի» մասնակիցների թվի ավելացումով:

2015 թվականին ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել են դրամաշնորհի պայմանագրով նախատեսված մշակութային միջոցառումները (աղյուսակ):

Աղյուսակ

2015 թվականին «Հայրենիք – սփյուռք կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացված մշակութային միջոցառումներ

հազ. դրամ

Միջոցառման համառոտ նկարագիրը	Նախահաշվային արժեքը
«Սփյուռք» ամառային դպրոցի կազմակերպում (250 հոգու վերապատրաստման դասընթացներ և կեցության ծախսեր)	80,000.0
ԱՊՀ հայ համայնքների կրթամշակութային զարգացում (դասախոսություններ և հանդիպումներ, աշակերտական օլիմպիադաների և մրցույթների անցկացում, տեսաֆիլմի նկարահանում, գործուղումներ)	26,000.0
Նշանավոր անհատներին նվիրված 6 միջոցառում և «Վերածնունդ» փառատոնին աջակցություն	24,298.6
ՀՀ-ում համահայկական 8 խորհրդաժողովների անցկացում (390 մասնակիցների կեցության ծախսերով)	23,000.0
Աշխատանք սփյուռքի համայնքներում (10 մասնագետների գործուղման ծախսեր)	23,000.0
Աջակցություն Մերձավոր սփյուռքի համայնքներին համայնքային կառույցներին (Վրաստանում 3 համերգի կազմակերպում)	22,000.0
Կրթամշակութային աջակցություն հեռավոր հայ համայնքներին (համերգներ, ներկայացումներ, գործուղման ծախսեր)	16,000.0
Սփյուռքահայերի ինտեգրման ծրագիր (180 հոգու էքսկուրսիաներ և հավաքներ, աջակցություն սփյուռքահայ արվեստագետներին)	11,000.0
Սփյուռքի հայ համայնքների ղեկավարների տարածաշրջանային հավաքներ (մասնակիցների կեցության ծախսեր)	10,000.0
Ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումներ (երեք միջոցառում, դասախոսություններ, տպագրական ծախսեր)	9,000.0
Համահայկական մրցանակաբաշխություն (4 անվանակարգերով 12 մրցանակներ)	8,000.0
«Մեր Մեծերը» խորագրով մշակութային երկու միջոցառում (DVD պատրաստում, տպագրական ծախսեր)	4,000.0
Հայկական սփյուռքի առկա ներուժի հաշվառման համակարգի	4,000.0

ստեղծում (շտեմարան և տվյալների համալրում)	
Աջակցություն սփյուռքի հայ համայնքների կայացմանը (ՀՀ սիմվոլների 17 լրակազմ)	1,000.0
Ընդամենը	**261,298.6**

Տարվա արդյունքներով «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով ՊՈԱԿ-ի դրամարկղային ծախսը կազմել է 216,515.5 հազ. դրամ, բյուջետային միջոցների տնտեսումը կազմել է 44,783.1 հազ. դրամ, որը վերադարձվել է պետական բյուջե:

2015 և 2016 թվականներին «Արի տուն» ծրագրի շրջանակներում սփյուռքի երիտասարդության ճանաչողական այցելություններ Հայաստան» ծրագրով ՊՈԱԿ-ին յուրաքանչյուր տարի հատկացվել է 100,000.0 հազ. դրամ: 2015 թվականին ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետություն 8 փուլով այցելել են 1100 սփյուռքահայ երիտասարդներ: Ծրագրի իրականացման համար ծախսվել է 93,507.2 հազ. դրամ և մնացած 6,492.8 հազ. դրամը վերադարձվել է պետական բյուջե: 2016 թվականի «Արի տուն» ծրագրի առաջին փուլը մեկնարկել է հունիսի 12-ին:

2015 և 2016 թվականներին «Հայաստան-սփյուռք գործակցության թեմայով հեռուստահաղորդումների և տեսահոլովակների պատրաստում և հեռարձակում» ծրագրով ՊՈԱԿ-ին յուրաքանչյուր տարի հատկացվել է 52,600.0 հազ. դրամ: 2015 թվականին ՊՈԱԿ-ի կողմից կնքված պայմանագրերով հեռարձակվել են «Սփյուռքի ժամ», «Մերոնք», «Ժառանգորդի իրավունքով», «Աշխարհասփյուռ» հեռահաղորդաշարերը, նկարահանվել է «Հայ Սփյուռք» ֆիլմաշարը և կատարվել են հրապարակումներ տարբեր զանգվածային լրատվական միջոցներում: Ստուգման պահի դրությամբ ՊՈԱԿ-ը 2016 թվականին ծրագրով հատկացված միջոցների հաշվին կնքել է 50,542.0 հազ. դրամի պայմանագրեր, ընդունման հանձնման արձանագրություններով փաստացի ծախսը կազմել է 12,726.1 հազ. դրամ:

«Տեղեկատվական և ուսուցողական կայքերի մշակման և սպասարկման ծառայություններ» ծրագրով պետական բյուջեից հատկացված միջոցներից Նախարարությունը կնքված դրամաշնորհի տրամադրման պայմանագրերով ՊՈԱԿ-ին 2015 և 2016 թվականներին հատկացրել է յուրաքանչյուր տարի 30,036.4 հազ. դրամ: Միջոցները հատկացվել են «Հայերն այսօր» էլեկտրոնային օրաթերթի և էլեկտրոնային գրադարանի պահպանման ծախսերի համար: Ստուգմամբ պարզվել է, որ ՊՈԱԿ-ի կողմից 2015 թվականին 1,440.0 հազ. դրամ վճարվել է ծրագրի շրջանակներում վարձակալած տարածքի վարձավճար և 365.8 հազ. դրամ՝ այդ տարածքի տեխսպասարկման վճար: 2016 թվականից էլեկտրոնային օրաթերթի և էլեկտրոնային գրադարանի աշխատողները տեղակայվել են Նախարարության մասնաշենքի տարածքում և նշված ծախսի անհրաժեշտությունը վերացել է: Հետևաբար, Նախարարության և ՊՈԱԿ-ի միջև 2016 թվականին կնքված պայմանագրի արժեքն անհրաժեշտ է վերանայել և 1,805.8 հազ. դրամ վերադարձնել պետական բյուջե:

2015 և 2016 թվականներին «Տարածքային համագործակցության և համահայկական մշակութային ծրագրերի իրականացում» ծրագրով ՊՈԱԿ-ին յուրաքանչյուր տարի հատկացվել է 20,000.0 հազ. դրամ: Ծրագրով հատկացված միջոցների հաշվին 2015 թվականին կազմակերպվել է «Երգում ենք Կոմիտաս» համահայկական մշակութային փառատոնը, որի համար ծախսվել է 19,835.0 հազ. դրամ և տարբերությունը վերադարձվել է պետական բյուջե:

Ընդհանուր առմամբ, 2015 թվականի արդյունքներով Նախարարության ծրագրերով հատկացված 1,035,188.8 հազ. դրամից պետական բյուջե վերադարձվել է 89,628.9 հազ. դրամ, որից ՊՈԱԿ-ի կողմից՝ 52,290.9 հազ. դրամ:

Եզրակացություն

1. 2015 թվականին «Այլ վարձատրություններ» հոդվածի միջոցների հաշվին 3,958.3 հազ. դրամով պարգևատրվել են Նախարարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողները, որոնց պարգևատրումը «Պետական պաշտոններ

զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն կարող էր կատարվել միայն «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցների հաշվին:

2. Ուսումնական գրականությունը պահեստավորելու համար Նախարարության և «Զանգակ-97» ՍՊԸ միջև 1,500.0 հազ. դրամ արժեքով պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 17-րդ և 20-րդ հոդվածների պահանջների խախտումով՝ վարձատուն ընտրվել է առանց մրցույթ անցկացնելու՝ բանակցային ընթացակարգով առանց հայտարարություն հրապարակելու գնման ձևով:

3. «Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրով Նախարարությանը պետական բյուջեից յուրաքանչյուր տարի հատկացվել է 14,400.0 հազ. դրամ: 2015 թվականին Նախարարությունը կնքել է պայմանագրեր՝ 12 գիտական հետազոտություն կատարելու համար, յուրաքանչյուրը՝ 1,200.0 հազ դրամ արժեքով: Նախարարության կողմից մշակված չէ ընթացակարգ՝ պատվիրվող հետազոտությունների գնահատման չափորոշիչները որոշելու համար, ու արդյունքում տարբեր բարդության և ծավալի հետազոտությունների համար պայմանագրերով սահմանվել և վճարվել է միևնույն չափի գումար:

4. 2015 թվականին Նախարարության կողմից հրատարակված 2100 հատ «Հայկական սփյուռք 2014» տարեգրքերից ստուգման պահի դրությամբ պահեստում մնացորդը կազմել է 1075 հատ, նախորդ տարվա «Հայկական սփյուռք 2013» տարեգրքերի մնացորդը՝ 630 հատ, կամ յուրաքանչյուր տարի առաջանում է տարեգրքերի չբաշխված մեծ քանակի և արժեքի մնացորդ:

5. Սիրիահայ ուսանողներին կրթաթոշակներ հատկացնելու նպատակով ՀՀ կառավարության 22.10.2015թ. թիվ 1244-Ն որոշմամբ պահուստային ֆոնդից հատկացված 24,656.0 հազ. դրամը Նախարարությունը նվիրաբերել է «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» հասարակական

կազմակերպությանը: Ստուգման ընթացքում հատկացված գումարի 3,131.0 հազ. դրամ մնացորդը կազմակերպությունը վերադարձրել է պետական բյուջե:

6. Նախարարությունը «Հայրենիք - սփյուռք կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ «Հայերն այսօր» էլեկտրոնային օրաթերթի և էլեկտրոնային գրադարանի պահպանման ծախսերի համար հատկացրել է յուրաքանչյուր տարի 30,036.4 հազ. դրամ: Ստուգմամբ պարզվել է, որ ՊՈԱԿ-ի կողմից 2015 թվականին տարածքի վարձակալության և տեխսպասարկման համար վճարվել է 1,805.8 հազ. դրամ: 2016 թվականից էլեկտրոնային օրաթերթի և գրադարանի աշխատողները տեղակայվել են Նախարարության մասնաշենքի տարածքում և նշված ծախսի անհրաժեշտությունը վերացել է: Հետևաբար, Նախարարության և ՊՈԱԿ-ի միջև 2016 թվականին կնքված պայմանագրի արժեքն անհրաժեշտ է վերանայել և 1,805.8 հազ. դրամ վերադարձնել պետական բյուջե:

Առաջարկություններ

<u>ՀՀ սփյուռքի նախարարությանը</u>

– Պետական բյուջեից հատկացված միջոցների արդյունավետ օգտագործումը ապահովելու նպատակով կրճատել «Հայկական սփյուռք» տարեգրքի տպագրվող խմբաքանակը և սահմանել չափորոշիչներ՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար ու կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների արժեքները որոշելու համար:

– Ապահովել վերադարձման ենթակա գումարի մուտքը պետական բյուջե:

Համաձայն «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի զ) կետի պահանջի՝ մեկամսյա ժամկետում ՀՀ վերահսկիչ պալատին գրավոր տեղեկատվություն տրամադրել՝ հայտնաբերված խախտումները վերացնելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների մասին: